ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դավիթ Ներսիկի Հախվերդյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Սերյոժայի Ավետիսյան** Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Սվետլանա Արկադիի Դալլաքյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ պետական կառավարման ակադեմիա**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունիսի 30-ին՝ ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (0025, ք. Երևան, Նալբանդյան փ. 128) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի մայիսի 29-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Տ. Ս. Մարտիրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Աղքատությունը բոլոր ժամանակներում համարվել է սոցիալական չարիք՝ խոչընդոտ հանդիսանալով ոչ միայն հասարակության զարգացման համար, այլև ձևավորելով սոցիալական լարվածություն և հիմնավոր դժգոհություններ հանրային շերտերում:

Ներկայումս աղքատության հաղթահարումը նույնպես արդիական սոցիալ-տնտեսական խնդիր է համարվում, քանի որ այն, թերևս, իր սրությամբ կամ ընդգծվածության տարբեր աստիճաններով դրսևորվում է ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում: Աղքատության առկայությունն իր ազդեցությունն է թողնում հասարակական տարբեր շերտերի համերաշխության, սոցիալական հավասարակշռման, սպառման վարքագծային դրսևորումների վրա: Աղքատ բնակչության առկայության հետևանքով որակյալ մարդկային կապիտալի ձևավորման գործընթացը դանդաղում է, իսկ աղքատ ապրելու հարմարվողականության մշակույթը խոչընդոտում է հասարակության լիարժեք զարգացումը: Եվ, ի վերջո, երկրում աղքատ ազգաբնակչության առկայությունը տնտեսական բեռ է հանդիսանում հանրության համար, քանի որ պետությունը ստիպված բազմաբնույթ սոցիալական միջոցառումներ է իրականացնում և հսկայածավալ ռեսուրսներ ծախսում աղքատության կրճատման կամ դրա սրացումը կանխարգելելու ուղղությամբ:

Ավելին, աղքատ բնակչությանը հատուկ է անտարբերությունը հասարակության զարգացումների հանդեպ, քանի որ աղքատներին չեն հետաքրքրում քաղաքացիական հասարակության վարքագծային դրսևորումները, որակյալ կրթությունը, հանրային կառավարման գործընթացներին ներգրավվածությունն ու մասնակցությունը, որն էլ ի հերթին լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում հանրային կյանքի զարգացումներում:

Հետևաբար, աղքատության հաղթահարման գործընթացում էկոհամակարգային ռազմավարական մոտեցումների կիրառման անհրաժեշտություն է առաջանում: Աղքատության հաղթահարման համատեքստում պետք է իրենց ներդաշնակ գործունեությունը ծավալեն բոլոր շահառուները՝ ի դեմս պետության, մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության կառույցների, ինչպես նաև աղքատ ազգաբնակչության ներկայացուցիչների, որոնց ընդհանուր շահերի իրագործումը աղքատության կրճատման գործընթացում ոչ միայն պետք է համակարգվեն, այլև ներդաշնակեցվեն:

Այս առումով, մասնագիտական գրականությունում բազմաթիվ ուսումնասիրություններ են արվել ինչպես հայազգի (Հախվերդյան Դ., Կարապետյան Լ., Խաչատրյան Ա., Մարկոսյան Ա., Մելքումյան Մ., Մկրտչյան Թ., Պետրոսյան Հ., Սահակյան Մ., Թավադյան Ա., Թադևոսյան Ա. և այլք), այնպես էլ օտարազգի (Ալքիր Ս., Գրիգորև Կ., Լեվիս Օ., Սլոբոդենյուկ Ե., Ոլքեր Ռ., Չերի Զ., Չիի, Թ. Ֆերերիա Ֆ., Ֆոստեռ Զ. և ուրիշներ) հետազոտողների կողմից, սակայն դեռևս իրենց լուծումները չեն ստացել այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են աղքատության հաղթահարման օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի բարելավման ուղիները,

աղքատության վերացմանն ուղղված էկոհամակարգի ձևավորման լուծումները, աղքատության կրճատման առաջընթացի առանցքային ցուցիչների համակարգի ներդրման ու կիրառման հնարավորությունները, ինչպես նաև աղքատության չափումների ներկայացումը հաղթահարման առաջընթացը բնութագրող համընդհանուր ցուցիչներով: Հետևաբար, թվարկված հիմնախնդիրների լուծումներով է պայմանավորված ատենախոսության արդիականությունը և հետազոտության թեմայի ընտրությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է հետազոտել և գիտական ուսումնասիրությունների արդյունքում հիմնավոր մոտեցումներ ներկայացնել ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական ուղիների գծով:

Ելնելով հետազոտության նպատակից՝ ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել աղքատության սոցիալ-տնտեսական բնույթը և դիտարկել աղքատության հաղթահարման գործընթացի նշանակությունը ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերի տեսանկյունից,
- վերլուծել աղքատության հաղթահարման միջազգային առաջավոր փորձը և կատարել առաջարկություններ այն Հայաստանի Հանրապետությում տեղայնացման ուղղություններով,
- շահառուների գործողությունների ներդաշանակեցման հենքով ներկայացնել աղքատության հաղթահարմանն ուղղված էկոհամակարգ՝ հաշվի առնելով նրանում ընդգրկված դերակատարների ռազմավարական գործողությունների ուղղությունները,
- մշակել Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի բարելավման ուղիներ,
- հիմնավորել աղքատության հաղթահարմանն ուղղված առաջընթացի առանցքային ցուցիչների կիրառման անհրաժեշտությունը ռազմավարական որոշումներում,
- մշակել առաջընթացի առանցքային ցուցիչներով աղքատության հաղթահարման ռազմավարական որոշումների կառուցակարգ,
- մշակել երկրում աղքատության հաղթահարման առաջընթացը բնութագրող համընդհանուր շղթայական ինդեքս:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը աղքատության սոցիալ-տնտեսական համակարգն է ՀՀ-ում, իսկ հետազոտության առարկան՝ աղքատության հաղթահարման ռազմավարական ուղիների կիրառման հիմնախնդիրները:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտի վերաբերյալ հայրենական ու արտասահմանյան հեղինակների աշխատություններն ու վերլուծությունները, ինչպես նաև որոշ գիտական հրապարակումներում տեղ գտած

տեսական և մեթոդական դրույթները:

Ատենախոսությունում օգտագործվել են ՀՀ-ում աղքատության վերաբերյալ նյութեր, հաշվետվություններ, վիճակագրական տվյալներ, այդ թվում՝ ուսումնասիրության ընթացքում հավաքագրված ու մշակված առաջնային տեղեկություններ:

Կիրառվել են գիտական վերացարկման, սոցիալ-տնտեսական և փորձագիտական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև աղքատության հաղթահարման իրագործման գծով փորձագիտական ուսումնասիրությունների եղանակներ: Մասնավորապես, կոռելյացիոն վերլուծություններով գնահատվել է աղքատության մակարդակի վրա ազդող գործոնների կապի սերտությունը, ռեգրեսիոն վերլուծություններով բացահայտվել են աղքատության ձևավորման գործոնների ֆունկցիոնալ կապեր, ինդեքսային մեծություններով իրականացվել են գործոնային գնահատումներ:

Հետազոտության հիմնական արդյունքը և գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը ամփոփվել է հետևյալ հիմնական դրույթներում.

- մշակվել է աղքատության հաղթահարման էկոհամակարգ՝ հիմնված հանրային համերաշխության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հենքով ռազմավարության մասնակցային իրականացման վրա, որով համակարգվում են երկրում աղքատության կրճատման բոլոր շահառուների կառավարչական գործառույթները,
- ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական կառավարման համատեքստում վերհանվել են առաջընթացի առանցքային ցուցիչների բովանդակային և կառուցվածքային բնութագրիչներն ու մշակվել աղքատության հաղթահարման գործողությունների արդյունքների չափելիություն ոչ միայն հետահայաց մոտեցումներով, այլև տեսանելի ապագային միտված գործողությունների նպատակադրումներով,
- աղքատության հաղթահարման առաջընթացի առանցքային ցուցիչների շրջանակի մշակմամբ ներկայացվել է աղքատության կրճատման կառավարչական որոշումների ընդունման կառուցակարգ՝ աղքատության կրճատման առաջընթացի ռազմավարական նպատակադրումները համեմատելով փաստացի ձեռքբերումների հետ և բացահայտելով աղքատության կանխարգելման ուղիների ուժեղ և թույլ կողմերը,
- մշակվել է երկրում աղքատության հաղթահարման առաջընթացը բնութագրող համընդհանուր շղթայական ինդեքս, որը, ի տարբերություն աղքատությունը չափող միջազգային ինդեքսների, լրացուցիչ հնարավորություն է ստեղծում վերլուծելու աղքատության կրճատմանն ուղղված գործողությունների արդյունքները և իրականացնելու աղքատության հաղթահարման գործոնային վերլուծություն՝ շահառուներին տրամադրելով ռազմավարական որոշումների ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը: Ատենախոսությունը ՀՀ-ում աղքատության հաղթահարման

ռազմավարական արդիական մոտեցումների մշակման ու ներդրման մեթոդական մոտեցումների, տեսական ու գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն է, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված երկրում աղքատության կրճատման նպատակադրումների և դրանց իրականացման ռազմավարական գործառույթների բարելավմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ մակրոտնտեսական կառավարման համակարգում՝ նպաստելով դրանց կառավարչական գործառույթների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև սոցիալական պատասխանատվության ինստիտուտի կայացմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ անցկացվել են աշխատանքային քննարկումներ տնտեսագետ տեսաբանների մասնակցությամբ, ինչպես նաև քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ամբիոնում: Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթները հեղինակը լուսաբանել է տարբեր գիտական ամսագրերում հրատարակված 7 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 137 էջի վրա (առանց հավելվածների), բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և հապավումների ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը և կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության **առաջին՝ «Աղքատության հաղթահարման տեսամեթոդական հիմքերը»** գլխում ուսումնասիրվել են աղքատության էությունը, դրա տնտեսագիտական բովանդակությունն ու սոցիալական բնույթը, ինչպես նաև աղքատության կառավարման հիմնական մոտեցումները՝ դրանք քննարկելով ժամանակակից սոցիալ-տնտեսական զարգացումների համատեքստում: Աղքատությունը դիտարկվել է որպես բազմաչափ սոցիալ-տնտեսական հիմնախնդիր՝ պայմանավորված եկամուտների անհավասար բաշխմամբ, զբաղվածության սահմանափակումներով և ինստիտուցիոնալ գործոններով:

Աղքատության հաղթահարման ռազմավարական կառավարման մոտեցումների ուսումնասիրության արդյունքում որպես կառավարման առավել արդյունավետ մոտեցում դիտարկվել է պետական և մասնավոր շահերի ներդաշնակեցման հիմքով իրականացվող կառավարումը, որը արդյունավետ կարող

է գործել ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական կառավարման գործընթացում, քանի որ աղքատությունը, հանդիսանալով բազմաչափ երևույթ, ըստ էության, պահանջում է բազմաթիվ շահառուների փոխկապակցված և համաձայնեցված գործունեություն, որը հնարավորինս կնպաստի աղքատության հետագա խորացման կանխարգելմանը և երկարաժամկետում կստեղծի աղքատության վիճակից դուրս գալու հնարավորություններ:

Վերլուծելով աղքատության ձևավորման պատճառահետևանքային փոխառնչությունները՝ կառավարումն իր առջև խնդիր է դնում իրականացնել կանխարգելիչ գործառույթներ, որպեսզի տեղի չունենա աղքատության ընդլայնում և խորացում: Երբ աղքատության հաղթահարման կամ նվազեցման ուղղությամբ ծախսված ջանքերը ունենում են դրական արդյունք, առաջարկվում է որպես առաջնահերթություն սահմանել աղքատության վերարտադրման ռիսկերի նվազեցումը կամ վերացումը:

Աղքատության հաղթահարման միջազգային փորձի ուսումնասիրության և ՀՀ-ում այն տեղայնացնելու գծով կառավարման գործընթացների վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ աղքատության հաղթահարման նախաձեռնությունները հիմնականում առնչվում են պետության կողմից վարվող սոցիալական պաշտպանության քաղաքականությանը և գալիս են «վերևից», ուստի այս ուղղությամբ կայացվող որոշումները հիմնականում ձևավորվում են մակրո և ոչ թե միկրոտնտեսական միջավայրում: Աղքատության հաղթահարման «ներքևից» բխող միջոցառումները անհատների կամ գործատուների կողմից համեմատաբար պասիվ են և կառավարման քիչ ջանքեր են պահանջում, որը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Աղքատության արդի վիճակը և դրսևորման պատճառահետևանքային հիմքերը ՀՀ-ում»** գլխում վերլուծության են ենթարկվել աղքատության հիմնական ցուցանիշների շարժընթացը ՀՀ-ում, տարածքային տարբերությունները և դրա սոցիալ-տնտեսական դրսևորումները, ինչպես նաև գնահատվել են ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերը: Ուսումնասիրության են ենթարկվել նաև աղքատության միջազգային ինդեքսները: Միաժամանակ հիմնավորվել է, որ ՀՀ-ում աղքատության դրսևորման պատճառահետևանքային միտումները բազմավեկտոր են և առաջացնում են բազմաչափ գնահատման անհրաժեշտություն: Աղքատության նման բազմաչափ բնույթը պայմանավորում է դրա գնահատման ցուցանիշների համակարգի մշակման և ներդրման կարևորությունը: Այս համատեքստում ռազմավարական կառավարման տեսանկյունից կարևորվում է երկրում աղքատության դրսևորման պատճառահետևանքային կապերի բացահայտումը, աղքատության գնահատման ցուցանիշների համակարգի ձևավորումն ու ներդրումը, բազմագործոն գնահատման հիմքով մոնիթորինգի մեթոդաբանության կիրառումը, ինչպես նաև աղքատության հաղթահարման ռազմավարական կառավարման մակրոտնտեսական էկոհամակարգի ձևավորումը:



Գծապատկեր 1. Աղքատության հիմնական ցուցանիշների շարժընթացը ՀՀ-ում[1]

Գծապատկեր 1-ում ներկայացված ցուցանշների վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում աղքատության հիմնական ցուցանիշները դրսևորում են հիմնականում նվազման միտում՝ չնայած, որ առանձին տարիներին արձանագրվում են տատանումներ: Գծապատկերի տվյալներից պարզ է դառնում, որ առկա է աղքատության ինչպես տարածվածության, այնպես էլ խորության և սրության ցուցանիշների բարելավում, ինչը վկայում է ոչ միայն աղքատ բնակչության կրճատման, այլև աղքատության ինտենսիվության թուլացման մասին: Այսպիսով, ընդհանուր միտումը կարելի է գնահատել դրական՝ արտացոլելով սոցիալ-տնտեսական միջավայրի հարաբերական լավացման և իրականացվող սոցիալական ծրագրերի ազդեցությունը աղքատության հաղթահարման համատեքստում:

Աղքատության վրա ազդող հիմնական գործոնների փոխկապվածությունը բացահայտելու նպատակով իրականացվել է պանելային բազմագործոն ռեգրեսիոն վերլուծություն՝ ուսումնասիրելով ՀՀ մարզերը և ք. Երևանը, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները [2]

Պատահական էֆեկտների (Random Effects) մեթոդ						
Տարեթվեր	*2004 2023*					
Տարիների քանակ	*20*					
Դիտարկվող օբյեկտների քանակ	*11*					
Դիտարկումների քանակ	*220*					
Փոփոխական	*Գնահատ.*	*Ստ. շեղում*	*t-ստատ.*	*p-արժեք*	*Նշանակ.*	*VIF ստուգում*
Գործակից	0,4779	0,1032	46,298	0,0000	***	-
Մանկավարժների թվաքանակ	(0,1351)	0,0635	-21,287	0,0344	*	13,938
Զբաղվածության մակարդակ	(0,1855)	0,0717	-25,865	0,0104	*	11,707
Իրական աշխատավարձ	0,1749	0,0789	22,170	0,0277	*	22,204
ՀՆԱ մեկ շնչի հաշվով	(0,2234)	0,0409	-54,672	0,0000	***	21,422

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2025, էջ 150:

[2] Կազմվել է հեղինակի կողմից ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացված արդյունքների հիման վրա:

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքների ուսումնասիրության արդյունքներից կարելի է ենթադրել, որ աղքատության մակարդակի փոփոխության վրա ամենամեծ բացասական ազդեցությունն ունի ՀՆԱ մեկ շնչի հաշվով ցուցանիշը, որի մեկ տոկոսային կետով ավելացումը բերում է աղքատության մակարդակի 0,223 տոկոսային կետով նվազման, նույնկերպ մանկավարժների թվաքանակի և զբաղվածության մակարդակի ավելացումը հանգեցնում են աղքատության մակարդակի համապատասխանաբար 0,135 և 0,186 տոկոսային կետով նվազման:

Առավել հատկանշական է իրական աշխատավարձի ազդեցությունը. այն աղքատության մակարդակի վրա ունի դրական ազդեցություն: Չնայած այն պատկերացումներին, որ աշխատավարձի բարձրացումը աղքատության մակարդակի վրա պետք է ունենա հակառակ ազդեցություն, այնուամենայնիվ ՀՀ որոշ մարզերում իրական աշխատավարձի ազդեցության գործակիցը դրական է, որը ենթադրում է, որ իրական աշխատավարձի աճին զուգընթաց աղքատության մակարդակը դրսևորում է աճ (թեկուզև չափավոր):

Ատենախոսության երրորդ՝ **«Աղքատության հիմնախնդրի լուծման հիմնական ուղղությունները ՀՀ-ում»** գլխում հեղինակի կողմից ներկայացվել են աղքատության հաղթահարման ռազմավարական քաղաքականության ձևավորման հիմնարար ուղղությունները և գործիքակազմը: Մասնավորապես, քննարկվել են աղքատության հաղթահարման էկոհամակարգի ձևավորման կառուցակարգերը և կարևորվել «վերևից» ու «ներքևից» աղքատության կրճատմանն ուղղված առանցքային ցուցիչների վերլուծությունները, երբ բացահայտվում են սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների ազդեցության դերակատարումները տվյալ ոլորտում: Մշակվել է ռազմավարական որոշումների ընդունման կառուցակարգ, որը հնարավորություն է տալիս վերանայել աղքատության հաղթահարման ռազմավարական ուղղությունները՝ դրանք դարձնելով առավել թիրախային: Ատենախոսության երրորդ գլխում հիմնավորվել է նաև աղքատության կրճատման առաջընթացի առանցքային ցուցիչների համակարգի մշակման և ներդրման անհրաժեշտությունը՝ որպես քաղաքականության արդյունավետության գնահատման և մոնիթորինգի գործիք: Հեղինակի կողմից մշակվել է նաև համընդհանուր շղթայական ինդեքս, որը հնարավորություն է տալիս գնահատել աղքատության հաղթահարման գործընթացի արդյունավետությունը՝ բացահայտելով տարբեր գործոնների ազդեցությունը:

Երբ ռազմավարական կառավարման գործընթացները իրականացվում են տեղայնացված մոտեցմամբ՝ առանց հաշվի առնելու աղքատության ձևավորման պատճառահետևանքային կապերը, նվազում է ռազմավարական որոշումների արդյունավետությունը[3]: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում դիտարկելու աղքատության հաղթահարման ռազմավարական ուղղությունները էկոհամակարգի շրջանակում, որը, թերևս, իր բաղադրիչներով կարող է առկա լինել տվյալ երկրում, բայց համակարգման և կազմակերպչական տեսանկյունից՝ պարզապես գործի չդրվել

[3] M. U. Klein, "Ways out of poverty diffusing best practices and creating capabilities", World Bank Policy Research, Working Paper 2990, 2003, pp. 18-19.

և դրանով իսկ չվերարտադրել անհրաժեշտ արդյունք[4]:

Այսպես, աղքատության հաղթահարմանը աջակցող ինստիտուցիոնալ բաղադրիչներով առաջարկվել է ձևավորել էկոհամակարգ (տե՛ս գծապատկեր 2): Ի տարբերություն միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող «համահասարակական» (whole-of-society) և «համակառավարական» (whole-of-government) մոտեցումների, որոնցում որպես հիմնական դերակատարներ հանդես են գալիս հասարակության տարբեր շերտերը[5], առաջարկվող էկոհամակարգը իրենից ենթադրում է փոխկապակցված դերակատարների ամբողջական համակարգ, որին բնորոշ է «ներքևից» և «վերևից» շահառուների ներդաշնակ գործունեություն, որի արդյունավետությունը գնահատվում է առաջընթացի ցուցիչների միջոցով:

Գծապատկեր 2. Աղքատության հաղթահարման էկոհամակարգին աջակցող բաղադրիչները [6]

Աղքատության հաղթարման էկոհամակարգը արդյունավետ կգործի, երբ ռազմավարական կառավարման դաշտում հստակեցվեն նրանում գործող բաղադրիչների փոխառնչություններն ու դրանցից բխող պատճառահետևանքային կապերը: Այս առումով, հիմնախնդիր է առաջացնում նաև աղքատության հաղթահարման էկոհամակարգի ռազմավարական կառավարման իրագործումը, որը առաջարկվում է իրականացնել հատուկ ընթացակարգով (տե՛ս գծապատկեր 3):

[4] Alkire, S., Roche, J. M., & Vaz, A., "Changes Over Time in Multidimensional Poverty: Methodology and Results for 34 Countries", *World Development*, 2017, pp. 232–249, https://doi.org/10.1016/j.worlddev.2017.01.011

[5] H. Haghighat and others, "The Whole-of-Government, Whole-of-Society Approach in Tackling COVID-19 Pandemic in Iran: Evidence for Policymakers", Health Scope, 2023, https://doi.org/10.5812/healthscope-138471

[6] Կազմվել է հեղինակի կողմից:



Գծապատկեր 3. Աղքատության հաղթահարման էկոհամակարգի ռազմավարական կառավարման գործընթացը [7]

Աղքատության կրճատման գծով առաջընթացի կարևորագույն ցուցիչներ են հանդես գալիս պետական սոցիալական աջակցության, կրթության հասանելիության, մասնավոր հատվածի աջակցության, քաղաքացիական հասարակության աջակցման արդյունքները, որոնց չափելիությունը և գնահատումները հիմքեր են ստեղծում ռազմավարական որոշումների համար: Ընդ որում, հետազոտությունները ցույց են տալիս, որ պարենային/ծայրահեղ աղքատության կանխարգելման վրա առավել որոշիչ դերակատարում ունեն «վերևից» նախաձեռնվող գործոնները՝ ի դեմս պետական սոցիալական ծրագրերի, իսկ աղքատության միջին գծի հաղթահարման համար առավել արդյունավետ են համարվում «ներքևից» եկող նախաձեռնությունները, ինչպիսիք են անձի կողմից իր կրթական ցենզի բարձրացումը, վերարտակավորումները, գործատուների կողմից աջակցությունը, հասարակական կազմակերպությունների (ՀԿ) կողմից աղքատության մշակույթի վերացմանն ուղղված միջոցառումները[8]:

Առաջընթացի առանցքային ցուցիչներ սահմանելիս կարևորվում է դրանց ազգային նշաձողերի (սահմանաչափերի) որոշումը, քանի որ ոչ իրատեսական սահմանաչափերի պարագայում հնարավորություն չի ստեղծվում հիմնավոր գնահատելու կոնկրետ ցուցիչի գծով կատարողականը, որն էլ իր հերթին խնդրահարույց է դարձնում դրան հետևող կառավարչական որոշումների նպատակահարմարությունը:

Առաջընթացի առանցքային ցուցիչների սահմանումը, հանդես գալով որպես աղքատության կրճատման շուրջ ձևավորվող էկոհամակարգի կարևորագույն բաղադրիչ, հնարավորինս պետք է օգտագործվի ռազմավարական կառավարման կողմից որպես մշտադիտարկման և գնահատման գործիք: Սակայն, մյուս կողմից, ԱԱՑ-երի սահմանումը նույնպես հիմնախնդիր է հանդիսանում ռազմավարական

[7] Կազմվել է հեղինակի կողմից:
[8] CAP, "The Top 12 Solutions To Cut Poverty in the United States", 2021, https://www.americanprogress.org/article/top-12-solutions-cut-poverty-united-states/

կառավարման համար, քանի որ այստեղ կարևորվում է ոչ միայն այդ ցուցանիշների հիմնավոր ընտրությունը, այլև դրանց գծով չափելի նշաձողերի սահմանումը:

Հետևաբար, կարևորվում է աղքատության հաղթահարման գործոնների և դրանց ԱԱՑ-ների տարեկան նշաձողերին հասանելիության մատրիցայի օգտագործումը, որը կողմնորոշիչ դերակատարում կարող է ունենալ առաջընթացի առանցքային ցուցիչների նշաձողերը սահմանելիս (տե՛ս աղյուսակ 2): Աղյուսակում ներկայացված կշիռները ցույց են տալիս աղքատության հաղթահարման քաղաքականության տարբեր ուղղությունների հարաբերական կարևորությունը: Այդ արժեքները կարող են փոփոխվել՝ կախված պետական քաղաքականության նպատակներից և տվյալ ժամանակահատվածի ռազմավարական առաջնահերթություններից:

Աղյուսակ 2.

Աղքատության հաղթահարման գործոնների և դրանց ԱԱՑ-ների տարեկան նշաձողերին հասանելիության սահմանման մատրիցա (%) [9]

Առաջընթացի առանցքային ցուցիչ	Ծայրահեղ աղքատություն	Աղքատություն ըստ ստորին [illegible]	Աղքատություն ըստ [illegible]	Աղքատություն ըստ [illegible]
Մասնագիտական կրթության հասանելիություն	15	20	25	25
Բարձրագույն կրթության հասանելիություն	5	8	10	15
Պետական սոցիալական աջակցություն	30	20	15	10
Գործատուների կողմից «զբաղված աղքատների» թվաքանակի կրճատմանը աջակցում	15	18	20	25
Վերաորակավորումների իրականացում	10	20	20	25
ՀԿ-ների կողմից աղքատության մշակույթի վերացմանը աջակցում	25	20	15	10
Բիզնես [illegible] ինանսավորում	10	20	20	25

ՀՀ-ում աղքատության հաղթահարման էկոհամակարգում առաջարկում ենք առաջընթացի առանցքային ցուցիչների կատարողականի գնահատումների և դրա հիման վրա կառավարչական որոշումների կայացման հատուկ մոտեցում, ըստ որի՝ ԱԱՑ-ների կատարողականի հիման վրա վերանայվում են աղքատության հաղթահարման ռազմավարական ուղիները, երբ ԱԱՑ-ների գծով տարեկան ցածր կատարողականների գնահատումով բացահայտվում են աղքատության տարբեր խմբերում իրականացվող գործողությունների բացթողումները, և դրանով իսկ

[9] Կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ ստորև ներկայացված աղբյուրագիտական վերլուծությունների.

- UN, “End poverty in all its forms everywhere”, 2014, https://www.globalgoals.org/goals/1-no-poverty/.
- D. Wolfe, “8 world-changing solutions to poverty”, World Vision, 2023, https://www.worldvision.ca/stories/advocacy/solutions-to-poverty.
- World Bank (2018), “Social Safety Net Programs Help Millions Escape Poverty, But Coverage Gaps Persist”, https://surl.lt/wgvgxu
- World Bank Group, “Ending Poverty and Ensuring Dignity for All”, 2023, https://www.worldbank.org/en/news/feature/2023/10/16/end-poverty-and-ensure-dignity-for-all
- Plan International Canada Inc., “5 Ways to End Poverty”, https://plancanada.ca/stories/5-ways-to-end-poverty

մշակվում աղքատության հաղթահարման ռազմավարական նոր ուղղություններ:

Գծապատկեր 3-ում ներկայացված է աղքատության կրճատման գործոնների փոխկապակցման շրջանակ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ ազդեցություններով: Ընդ որում, այդ գործոնների շրջանակը կարող է ընդլայնվել՝ ելնելով աղքատության կրճատման առաջընթացի ցուցիչների առջև դրված պահանջներից: Հեղինակի կողմից նախապես իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքում որպես որպես աղքատության հաղթահարման օբյեկտիվ գործոններ են առաջարկվում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի (a) և երկրում արձանագրվող տարեկան գնաճի (b), իսկ սուբյեկտիվ գործոնների թվին են դասվում ազգաբնակչության կրթական ցենզի (c) ու երկրում առկա միջին աշխատավարձի (d) փոփոխման առաջընթացի ցուցանիշները: Այս դեպքում տարբերակում է դրվում «վերևից» և «ներքևից» աղքատության հաղթահարման գործոնների տարանջատման վրա, որի նպատակը առաջընթացի առանցքային ցուցիչներով գործոնային այդ խմբերի ազդեցության գնահատումներն են աղքատության կրճատման վրա:

Նշված փոփոխականների ընտրության հիմքում ընկած են զույգային կոռելյացիոն վերլուծության արդյունքները, որոնք ցույց են տալիս, որ ՀՀ-ում աղքատության մակարդակի և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի, երկրում արձանագրվող տարեկան գնաճի, ազգաբնակչության կրթական ցենզի, վճարվող միջին աշխատավարձի միջև նկատվում է կապի նշանակալից սերտություն (տե՛ս աղյուսակ 3), որն էլ հիմք է հանդիսանում այդ ցուցանիշները ընդգրկելու առանցքային ցուցիչներով աղքատության հաղթահարման ռազմավարական կառավարման էկոհամակարգում:

Աղյուսակ 3.

Աղքատության մակարդակի վրա ազդող գործոնների ազդեցության զույգային կոռելյացիայի արդյունքները ՀՀ-ում [10]

	Աղքատության մակարդակ	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ	Տարեկան գնաճ	Մասնագիտական կրթական ցենզ	Միջին աշխատավարձ
Աղքատության մակարդակ	1,0				
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ	(0,65)	1,0			
Տարեկան գնաճ	0,81	(0,12)	1,0		
Մասնագիտական կրթական ցենզ	(0,72)	0,34	0,25	1,0	
Միջին աշխատավարձ	(0,79)	0,43	(0,11)	0,47	1,0

[10] Կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ՎԿ 2001-2023 թթ. տվյալների կոռելյացիոն վերլուծությունների հիման վրա:



Գծապատկեր 3. Աղքատության կրճատման գործոնների էկոհամակարգային փոխկապակցումը [11]

Առաջարկվում է երկրում աղքատության հաղթահարման առաջընթացը բնութագրող առանցքային ցուցիչների համընդհանուր շղթայական ինդեքսի կիրառում՝ կառուցված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հիման վրա: Ի տարբերություն միջազգային պրակտիկայում գործող աղքատության ինդեքսների (MPI, HDI և այլն), հեղինակի կողմից առաջարկվող շղթայական ինդեքսը կառուցվում է ոչ թե իրավիճակային գնահատումներով, այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով գործընթացի առաջընթացը բնութագրող մոտեցումներով: Այս դեպքում, աղքատության հաղթահարման առաջընթացը բնութագրող առաջարկվող շղթայական ինդեքսը (Ip) ներկայացվում է այսպես.

$$Ip = \frac{a1 \times b1 \times c1 \times d1}{a0 \times b0 \times c0 \times d0} \quad [1]$$

կամ

$$Ip = Im \times In \quad [2]$$

որտեղ

Im – օբյեկտիվ գործոնային ենթաինդեքս,

In – սուբյեկտիվ գործոնային ենթաինդեքս,

1 և 0 - ցուցիչները ներկայացնում են համապատասխանաբար փաստացի և բազիսային տարիները:

Առաջարկվող ինդեքսի գործնական կիրառելիությունը ցույց տալու համար կատարվել է ինդեքսի հաշվարկ իրական ցուցանիշների հիման վրա (տե՛ս աղյուսակ 3):

[11] Կազմվել է հեղինակի կողմից:

Աղյուսակ 4.

Աղքատության հաղթահարման առաջընթացի շղթայական ինդեքսի հաշվարկման տեղեկատվական շրջանակը ՀՀ-ում [12]

Ցուցանիշներ	2021	2022	*Առաջընթաց 2022 թ.՝ 2021 թ. նկատմամբ*	2023	*Առաջընթաց 2023 թ.՝ 2022 թ. նկատմամբ*
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (հազ. դրամ)	2,360	2,902	*1,22*	3,189	*1,09*
Տարեկան գնաճ	1,072	1,086	*1,01*	1,02	*0,94*
Մասնագիտական կրթական ցենզ (%)	53,0	55,0	*1,04*	56	*1,02*
Միջին աշխատավարձ (հազ. դրամ)	204,0	235,0	*1,14*	270,0	*1,15*

Քանի որ տարեկան գնաճը բացասաբար է անդրադառնում աղքատության մակարդակի վրա, ուստի դրա առաջընացը շղթայական ինդեքսի հաշվարկում կհակադարձվի (b_1 =1/0,94=1,06 b_0=1/1,01=0,99):

Այսպես, աղյուսակ 4-ի տվյալներով ՀՀ-ում 2021-2023 թվականների ժամանակահատվածում աղքատության հաղթահարման առաջընթացի ինդեքսը կազմել է.

$$Ip = \frac{a1 \text{ x } b1}{a0 \text{ x } b0} \text{x} \frac{c1 \text{ x } d1}{c0 \text{ x } d0} = \frac{1{,}09 \text{ x } 1{,}06}{1{,}22 \text{ x } 0{,}99} \text{x} \frac{1{,}02 \text{ x } 1{,}15}{1{,}04 \text{ x } 1{,}14} = \mathbf{0{,}956 \text{ x } 0{,}989 = 0{,}945} \qquad \textbf{[3]}$$

Ընդ որում, ենթադաինդեքսների հաշվարկը ցույց է տալիս, որ վերլուծվող ժամանակահատվածում երկրում աղքատության հաղթահարմանը ուղղված քննարկվող գործոնները և՛ «վերևից» (ենթաինդեքսը՝ 0,956), և՛ «ներքևից» (ենթաինդեքսը՝ 0,989) բացասական են ազդել՝ ընդհանուր առմամբ նախորդ տարվա նկատմամբ գրանցելով առանցքային ցուցիչների հետընթաց (Ip<1,0):

Ատենախոսության **«Եզրակացություններ» բաժնում** Հայաստանի Հանրապետությունում աղքատության վիճակի գնահատումների, ինչպես նաև միջազգային փորձի ոլորտային ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվել են մի շարք եզրակացություններ և կատարվել բարելավման առաջարկություններ երկրում աղքատության հաղթահարման ռազմավարական ուղղությունների գծով.

1. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջազգային ասպարեզում չի գործում աղքատության հաղթահարման կառավարմանն ուղղված կառավարչական համընդհանուր մոդել: Որպես կանոն, ելնելով երկրների տնտեսական զարգացվածության աստիճանից և ֆինանսական հնարավորություններից՝ աղքատության կրճատման կառավարումը կազմակերպվում է կանխարգելիչ կամ էլ

[12] Կազմվել է հեղինակի կողմից՝ պաշտոնական վիճակագրական տվյալներով:

առկա ռիսկերի մեղմման ուղղությամբ: Այս առումով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ներկայիս տնտեսական իրավիճակը՝ աղքատության հաղթահարման գծով նպատակահարմար չէ տեղայնացնել միջազգային պրակտիկայում ընդունված համատարած և լայնածավալ կառավարչական գործառույթներ: Ընդ որում, փոխարենը նպատակահարմար է կարճաժամկետ կտրվածքով տեղայնացնել խոցելի խմբերին միտված սոցիալական միջոցառումների միջազգային փորձառություններ:

Հատկանշական է նաև, որ միջազգային փորձով աղքատության հաղթահարման գծով առավել արդյունավետ է գործում հանրային համերաշխության հենքով իրականացվող կառավարումը:

2. Հայաստանի Հանրապետությունում աղքատության մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները վկայում են, որ աղքատության նվազման ցուցանիշներով Հայաստանի Հանրապետությունը վերջին տասնամյակում միջազգային վարկանիշավորման սանդղակներում առաջանցիկ դիրքեր է գրավում: Բացի այդ, աղքատության նվազման վրա առավելապես ներազդում են «վերևից» եկող գործոններ՝ ի դեմս տնտեսական աճի, իրականացվող սոցիալական ծրագրերի, քան ներքևից եկող ազդակները, ինչպիսիք են բիզնեսի աջակցությունը, զբաղվածության շուկայի կառուցվածքային փոփոխությունները, անձի կրթական ցենզի բարձրացման նախաձեռնությունները: Ի վերջո, աղքատության հաղթահարման գործընթացը հավասարապես չի դրսևորվում հանրապետության տարածքում: Այն առավելապես ակնառու է Երևան քաղաքում, իսկ մարզերում տեղի է ունենում համեմատաբար դանդաղ տեմպերով:

3. Հետազոտական արդյունքների հիման վրա աղքատության հաղթահարմանը աջակցող ինստիտուցիոնալ բաղադրիչներով առաջարկվում է ձևավորել էկոհամակարգ և այն տեսանելի դարձնել ռազմավարական կառավարման շրջանակում: Աղքատության հաղթահարման էկոհամակարգի ձևավորման և ռազմավարական կառավարման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք խթանիչ գործոններ, ինչպիսիք են տնտեսական առաջընթացի աջակցությունը, կրթության հասանելիությամբ մարդկային կապիտալի ձևավորումն ու օգտագործումը, պետական սոցիալական ծրագրերով աջակցումը, իրավական բարեփոխումների աջակցությունը, աղքատության հաղթահարման ոչ միայն հետահայաց, այլ նաև առաջընթացին ուղղված չափումները, հանրային համերաշխության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության առկայությունը:

4. Ընդհանուր առմամբ, աղքատության հաղթահարման էկոհամակարգի գործունեությունը առանձնահատուկ գնահատականներ է պահանջում, որը առաջարկվում է իրականացնել ոլորտում իրականացվող գործողություններով պայմանավորված՝ առաջընթացի չափումներով: Գործնականում, էկոհամակարգային բաղադրիչների փոխառնչությունները կարող են ձևավորվել, սակայն պատշաճ մակարդակով չցուցաբերել պահանջվող ակտիվություն, որն էլ բացասաբար է անդրադառնում աղքատության հաղթահարման առաջընթացի վրա: Այդ իսկ պատճառով՝ առաջարկվում է այս ոլորտում կիրառել առաջընթացի առանցքային ցուցիչներ (ԱԱՑ):

5. Աղքատության հաղթահարման գծով առաջընթացի ցուցիչների կիրառումը ռազմավարական կառավարման գործընթացում առաջարկվում է կիրառել կոնկրետ քայլընթացով, որը ենթադրում է ԱԱՑ-ների շրջանակի և ԱԱՑ-ների գծով ազգային նշաձողերի սահմանում, երբ աղքատության կրճատման ընտրված առաջընացի ռազմավարական ցուցիչներին տրվում է չափելիություն: Այդ քայլին հաջորդում է ԱԱՑ-ների գծով տարեկան կատարողականի գնահատումը, երբ աղքատության կրճատման առաջընթացի ռազմավարական նպատակադրումները համեմատվում են փաստացի ձեռքբերումների հետ՝ դրանով իսկ մեկնաբանելով ստացված շեղումների և նպատակադրումներից հասանելիության թերացումների բնույթը: Ի վերջո, կարևորվում է նաև ԱԱՑ-ների կատարողականի հիմքով աղքատության հաղթահարման ռազմավարական ուղիների վերանայումը, երբ բացահայտվում են աղքատության կրճատման գործընթացների թույլ և ուժեղ կողմերը, և ընդունվում են բարելավմանն ուղղված համապատասխան ռազմավարական որոշումներ:

6. Հետազոտական արդյունքներով առաջարկվում է երկրում աղքատության հաղթահարման առաջընթացը բնութագրող առանցքային ցուցիչների համընդհանուր շղթայական ինդեքսի կիրառում՝ կառուցված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հիման վրա: Ի տարբերություն միջազգային պրակտիկայում գործող աղքատության ինդեքսների, հեղինակի կողմից առաջարկվող շղթայական ինդեքսը կառուցվում է ոչ թե իրավիճակային գնահատումներով, այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով գործընթացի առաջընթացը բնութագրող մոտեցումներով: Մշակված ինդեքսը օժանդակում է աղքատության առաջընթացին ուղղված գործողությունների մշտադիտարկումը, քանի որ յուրաքանչյուր տարվա գծով գնահատվում են այն գործոնային փոփոխությունները, որոնք կարող են դրական կամ բացասական ձևով ազդել երկրում աղքատության կրճատման վրա:

7. Հետազոտության արդյունքներով առաջարկվում է աղքատության հաղթահարման ռազմավարական կառավարման արդիական մի շարք ուղղություններ. նախ և առաջ, աղքատության հաղթահարման ռազմավարությունը կարող է արդյունավետ գործել էկոհամարկարգի շրջանակում՝ միմյանց հետ փոխկապակցելով տնտեսական, սոցիալական և իրավական ոլորտներ, որոնք ներդաշնակորեն են գործում: Այնուհետև, աղքատության հաղթահարման ռազմավարությունը կիրառելիս կարևորվում է նաև այդ գործընթացի վրա օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության գնահատումը, որպեսզի օպտիմալ բաշխվեն արդքատության կրճատմանը ուղղված վարչական և տնտեսական սահմանափակ ռեսուրսները: Կարևորվում է նաև մասնակցային հենքով աղքատության հաղթահարման ռազմավարության կառուցումը, երբ տարբեր հարթություններում գտնվող տարբեր շահառուներ իրենց միաժամանակյա գործողություններով նպաստեն աղքատության կրճատմանը: Եվ վերջապես, ներկայումս կարևորվում է նաև ոչ թե աղքատության իրավիճակային կանխարգելման, այլ առաջընթացին միտված աղքատության կրճատման ռազմավարական կառավարումը՝ հիմնված տեսանելի ապագային միտված կատարողականի առանցքային ցուցիչների վրա:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական աշխատություններում.

1. Բաղդասարյան Գ., «Աղքատության վրա ազդող հիմնական գործոնների վերլուծություն», «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, 2025 /5/, https://doi.org/10.58587/18292437-2025.5-162
2. Բաղդասարյան Գ., «Առաջընթացի առանցքային ցուցիչներով աղքատության հաղթահարման ռազմավարական կառավարման մոտեցումները», «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, 2026 /1/, https://doi.org/10.58587/18292437-2026.1-197
3. Baghdasaryan G., “Analysis of the possibilities of localizing international experience in overcoming poverty in RA”, Scientific-Analytical Journal “Region and the World” 2025 /3/, https://doi.org/10.58587/18292437-2025.3-228
4. Baghdasaryan G., “A spatial analysis of poverty in the Republic of Armenia: A comparative study of Yerevan and the regions”, Economics, Finance and Accounting, Scientific Journal 1(17), 65, 2026, https://doi.org/10.59503/29538009-2026.1.17-65
5. Baghdasaryan G., “Beyond employment: Understanding the global and local dimensions of working poverty”, Economics, Finance and Accounting, Scientific journal, SI-1, 2025, https://doi.org/10.59503/29538009-2025.si-1-25
6. Baghdasaryan G., “Ecosystem-Based Management of Poverty Alleviation: Evidence from Armenia”, Messenger of ASUE, 2025 /3/, https://doi.org/10.52174/1829-0280_2025.3-53
7. Baghdasaryan G., “Trends in changes in poverty levels in the Republic of Armenia”, Scientific-Analytical Journal “Region and the World”, 2024 /3/, https://doi.org/10.58587/18292437-2024.3-83

БАГДАСАРЯН ГЕВОРГ БАГДАСАРОВИЧ

СТРАТЕГИЧЕСКИЕ НАПРАВЛЕНИЯ ПРЕОДОЛЕНИЯ БЕДНОСТИ В РА

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - “Экономика и управление народным хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 30-го июня 2026 года в 14:00 на заседании Специализированного совета по экономике 014 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, ул. Налбандяна 128, г. Ереван, РА.

Основная цель исследования – исследовать и представить обоснованные на основе научных исследований подходы к стратегическим путям преодоления бедности в Республике Армения.

Исходя из цели исследования, **задачи** диссертации заключаются в следующем:

• изучить социально-экономическую природу бедности и прокомментировать значение процесса борьбы с бедностью с точки зрения как общественных, так и частных интересов;

• проанализировать передовой международный опыт в борьбе с бедностью и дать рекомендации по направлениям его локализации в Республике Армения;

• представить экосистему, направленную на борьбу с бедностью, основанную на интернализации действий бенефициаров, с учетом направлений стратегических действий участвующих в ней субъектов;

• разработать пути совершенствования законодательной и институциональной базы борьбы с бедностью в Республике Армения;

• обосновать необходимость использования ключевых показателей прогресса в борьбе с бедностью при принятии стратегических решений;

• разработать систему стратегических решений по борьбе с бедностью с ключевыми показателями прогресса;

• разработать универсальный цепной индекс, характеризующий прогресс в борьбе с бедностью в стране.

Основные научные результаты и инновации проведенного исследования заключаются в следующем:

• Разработана экосистема сокращения бедности, основанная на участии в реализации стратегии, базирующейся на общественной солидарности и корпоративной социальной ответственности, которая координирует управленческие функции всех бенефициаров сокращения бедности в стране.

• В контексте стратегического управления сокращением бедности в Республике Армения выявлены содержательные и структурные характеристики ключевых показателей прогресса, а также разработана возможность измерения результатов мероприятий по сокращению бедности не только ретроспективными подходами, но и путем постановки целей для действий, ориентированных на видимое будущее.

• Путем разработки системы ключевых показателей прогресса в сокращении бедности представлен механизм принятия административных решений по сокращению бедности, сравнивающий стратегические цели прогресса в сокращении бедности с фактическими

достижениями и выявляющий сильные и слабые стороны методов предотвращения бедности.

• Разработан агрегатный цепной индекс, характеризующий прогресс сокращения бедности в стране, который, в отличие от международных индексов измерения бедности, создает дополнительную возможность анализа результатов мероприятий по сокращению бедности и проведения факторного анализа мер по борьбе с бедностью, предоставляя бенефициарам информацию, необходимую для принятия стратегических решений.

GEVORG BAGHDASAR BAGHDASARYAN

STRATEGIC DIRECTIONS FOR POVERTY ALLEVIATION IN THE RA

The abstract of the dissertation is submitted for pursuing the degree of Ph.D. in Economics in the field 08.00.02 - "Economy, the economics of its spheres and control".

The defense of the dissertation will take place at 14:00 on 30th June, 2026 at the Meeting of Specialized Council 014 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia, acting at the Armenia State University of Economics. Address: 128 Nalbandyan Street, Yerevan, 0025, RA.

ABSTRACT

The **main objective** of the study is to explore and present research-based approaches to strategic poverty alleviation in the Republic of Armenia.

Based on the goal of the study, **the objectives** of the research are as follows:

• To study the socio-economic nature of poverty and comment on the significance of the poverty alleviation process from the perspective of both public and private interests;

• To analyze best international practices in poverty alleviation and provide recommendations on how to localize them in the Republic of Armenia;

• To present an ecosystem aimed at combating poverty based on the internalization of beneficiary actions, taking into account the strategic action areas of the participating entities;

• To develop ways to improve the legislative and institutional framework for combating poverty in the Republic of Armenia;

• To substantiate the need to use key indicators of progress in the fight against poverty in strategic decision-making;

• To develop a system of strategic decisions on combating poverty with key indicators of progress;

• To develop a universal chain index characterizing progress in the fight against poverty in the country.

The **main scientific results and innovations** of the study are as follows:

• A poverty reduction ecosystem has been developed, based on participation in the implementation of a strategy based on social solidarity and corporate social responsibility, which coordinates the management functions of all beneficiaries of poverty reduction in the country.

• In the context of strategic management of poverty reduction in the Republic of Armenia, the substantive and structural characteristics of key progress indicators have been identified, and the possibility of measuring the results of poverty reduction activities not only through retrospective approaches but also by setting goals for actions aimed at the visible future has been developed.

• By developing a system of key progress indicators in poverty reduction, a mechanism for administrative decision-making on poverty reduction has been presented, comparing strategic goals for poverty reduction progress with actual achievements and identifying the strengths and weaknesses of poverty prevention methods.

• An aggregate chain index has been developed that characterizes the progress of poverty reduction in the country, which, unlike international indices for measuring poverty, creates an additional opportunity to analyze the results of poverty reduction measures and conduct a factor analysis of measures to combat poverty, providing beneficiaries with the information necessary for making strategic decisions.